

4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների, 2015թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մարդասիրական օգնության կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծվել 114627.9 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 94.5 տոկոսը կազմել են դեղորայք և բժշկական տարբեր ապրանքները, 3.4 տոկոսը՝ ապարատներ և սարքերը, 2.0 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները և 0.1 տոկոսը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս	/հազ. դրամ/ Աճի տեմպը, %
Ընդամենը	70682.4	114627.9	162.2
<i>այդ թվում՝</i>			
Ապարատներ և սարքեր	48.0	3850.0	80.2 անգ
Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ	16222.4	150.0	0.9
Գեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	51109.0	108382.0	2.1 անգ
Տարբեր տեսակի ապրանքներ	3303.0	2245.9	68.0

2015թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մարդասիրական օգնության ծավալը աճել է 62.2 տոկոսով: Մարդասիրական օգնությունը ստացվել է ԱՄՆ-ից, Գերմանիայից, Նիդերլանդներից և Հայաստանի Հանրապետությունից:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս
Ընդամենը	70682.4	114627.9	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
ԱՄՆ	33085.4	3056.8	46.8	2.7
Հայաստանի Հանրապետություն	21374.6	107501.3	30.2	93.8
Գերմանիա	-	3245.1	-	2.8
Բելոռուս	16222.4	-	23.0	-
Նիդերլանդներ	-	824.7	-	0.7

Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-հունիսին), ըստ տարիների, հազ.դրամ

